ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. N ----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑԸ
«ՆՈՐ ԶՄՅՈՒՌՆԻԱ» ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշենի 13-րդ փողոցն անվանակոչել «Նոր Զմյուռնիա» անվամբ՝ «Նոր Զմյուռնիայի փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑԸ «ՆՈՐ ԶՄՅՈՒՌՆԻԱ» ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նուբարաշենի կառուցումը կապված է հայ ազգային բարերար Պողոս Նուբար փաշայի անվան ու գործունեության հետ: Նրա հայրը՝ Եգիպտոսի առաջին վարչապետ Նուբար փաշան, ծնվել և կրթություն է ստացել Զմյուռնիայում: Նուբարյանները սերել են 18-րդ դարավերջին Լեռնային Ղարաբաղից Զմյուռնիա գաղթած վաճառական Մկրտիչ Նուբարի ճյուղից և բավական ճանաչված էին Զմյուռնիայում:

Դեռևս 1926 թվականին Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)՝ Ֆիլադելֆիայում (ԱՄՆ) տեղի ունեցած հանդիպման ժամանակ որոշում է ընդունվում ֆինանսավորել ՀԽՍՀ-ում նոր ավանի կառուցումը: Ծրագրի հիմնական նպատակը Հայոց ցեղասպանությունը վերապրած հայ ընտանիքների հայրենադարձությունն էր:

Ծրագրի իրականացման համար նախատեսված էր ՀԲԸՄ-ի 25-ամյակի առթիվ հանգանակել 250.000 ԱՄՆ դոլար մինչև 1931թ. ապրիլի 30-ը: 1929թ. վերջին հանգանակվել էր ընդամենը 153.000 ԱՄՆ դոլար: Նուբարաշենի կառուցման աշխատանքները չեն ձախողվում՝ շնորհիվ Պողոս Նուբարի հատկացրած 100.000 ԱՄՆ դոլարի: 1930թ. ապրիլի 25-ին Փարիզում Հայաստանի կառավարության և ՀԲԸՄ կենտրոնական վարչության ներկայացուցիչների միջև ստորագրվում է «Համաձայնագիր Նուբարաշենի տիպար ավանի կառուցման մասին»: Դրա հիման վրա 1930թ. ամռանը ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի նախագծով Երևանից 7կմ հարավ-արևելք սկսվում է ավանի շինարարությունը:

Արմատներով Լեռնային Ղարաբաղից, եգիպտահայ քաղաքական գործիչ, Եգիպտոսի առաջին վարչապետ Նուբար Փաշան (1825-1899թթ.) ծնվել և կրթություն է ստացել Զմյուռնիայում, ապա տեղափոխվել Եգիպտոս: Հայ ականավոր քաղաքական գործիչ, ՀԲԸՄ հիմնադիր ու առաջին նախագահ Պողոս Նուբարը (1851-1930թթ.) ծնվել է Կ.Պոլսում: Հիմնավոր, երկրագործական կրթություն է ստացել նախ Ֆրանսիայում, ապա՝ Շվեյցարիայում: 1912թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կոնդակով Պողոս Նուբարը նշանակվել է Հայ ազգային պատվիրակության ղեկավար և լիազոր

ներկայացուցիչ՝ հայկական հարցի վերաբերյալ եվրոպական երկրներում գումարվելիք համաժողովներում հայ ժողովրդի դատը և իրավունքները պաշտպանելու մանդատով: 1932թ. Նուբարաշենն իր հյուրընկալ դռներն է բացում Հունաստանից, Ֆրանսիայից, Բուլղարիայից, Լիբանանից և Սիրիայից առաջին հայրենադարձների առջև՝ շուրջ 70 ընտանիք:

Հունաստանից Նուբարաշենում հաստատված առաջին գերդաստաններն էին Քյոսյանները, Բերբերյանները, Կզլյանները, Պարունակյանները, Չիլինգիրյանները, Մուշլյանները, Թաթարյանները, Չալիկյանները, Օհանյանները, Օրուջյանները և այլք:

Նուբարաշենի առաջին նորածինը՝ Նուբար Թադևոսի Բերբերյանը, (ծնողները հայրենադարձվել էին Հունաստանից, նրանց հատկացվել էր Նուբարաշնում կառուցված առաջին տունը), լույս աշխարհ է եկել 1933թ. հունվարի 10-ին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշենի 13-րդ փողոցն անվանակոչել «Նոր Զմյուռնիա» անվամբ՝ «Նոր Զմյուռնիայի փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑԸ «ՆՈՐ ԶՄՅՈՒՌՆԻԱ» ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Նուբարաշենի 13-րդ փողոցը «Նոր Զմյուռնիա» անվամբ անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑԸ «ՆՈՐ ԶՄՅՈՒՌՆԻԱ» ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Նուբարաշենի 13-րդ փողոցը «Նոր Զմյուռնիա» անվամբ անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՄԱՐԳՍՅԱՆ